Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Էջմիածին համայնքի Սբ. Մովսես Խորենացի և Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման կապալային աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2021** թվականի **օգոստոսի 12**-ին կնքված N **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2** պայմանագրում **2021** թվականի **սեպտեմբերի 23**-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1՝ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ի միջև 12.08.2021 թ. կնքված № **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2** ծածկագրով գնման պայմանագրով սահմանված աշխատանքները կատարվել են օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետից շուտ, և Պատվիրատուն աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը վճարում է վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետից շուտ:

Փոփոխության նկարագրություն՝ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ի միջև 12.08.2021 թ. կնքված № **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2** ծածկագրով գնման պայմանագրի Հավելված N 3-ը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝ Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ի միջև 12.08.2021 թ. կնքված № **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2** ծածկագրով գնման պայմանագրի 4.1, 5.1 և 8.5 կետեր:

Պատվիրատու՝ **Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինություն**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2021 թ-ի օգոստոսի 12-ին կնքված N «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Էջմիածին

23 սեպտեմբերի 2021 թ.

Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությունը, ի դեմս տնօրեն Մ. Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևանյան բազալտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Բաղդասարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 12 օգոստոսի 2021 թ. կնքված № «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1, 5.1 և 8.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն **Էջմիածին համայնքի Սբ. Մովսես Խորենացի և Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման կապալային աշխատանքների** (այսուհետ՝ Աշխատանքներ)՝ դիմաց վճարում է սույն Համաձայնագրի N 1 հավելվածին՝ Վճարման ժամանակացույցին համապատասխան:

1.2 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **252000000 /երկու հարյուր հիսուներկու միլիոն/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.3 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

1.4 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայությունների հանձման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է 2 /երկու/ էջից, 3 /երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, Պատվիրատուին տրվում է երկու օրինակ, Կատարողին՝ մեկ: Սույն Համաձայնագրի N 1, հավելվածը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Էջմիածնի համայնքապետարանի	«Երևանյան բազալտ» ՍՊԸ
«Բարեկարգում» տնօրինություն	ք. Երևան, Հաղթանակ թաղ., Սպանդարյանի
Վաղարշապատի ՏԳԲ	արդյունաբերական հանգույց
Ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0	«Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900322001018	Հ/Հ՝ 220410124071000
ՀՎՀՀ՝ 04711468	ՀՎՀՀ՝ 01202433
Տնօրեն՝ _____ Մ. Խաչատրյան	Տնօրեն՝ _____ Խ. Բաղդասարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
12 օգոստոսի 2021 թ. կնքված
«ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ՀԲՄԱՇՁԲ 21/2» ծածկագրով պայմանագրում
փոփոխություններ կատարելու նպատակով
23 սեպտեմբերի 2021 թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187	Էջմիածին համայնքի Սբ. Մովսես Խորենացի և Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման կապալային աշխատանքներ	0	0	0	0	0	0	0	0	50000000	85000000	85000000	252000000	252000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
Վճարումներն իրականացվում են համապատասխան հանձնման – ընդունման ակտերի հիման վրա:
Աշխատանքների վճարման ժամանակացույցում հնարավոր են փոփոխություններ կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա:

Էջմիածին համայնքի Սբ. Մովսես Խորենացի և Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման կապալային աշխատանքների դիմաց վճարումներն իրականացվելու են համայնքի բյուջեից 70 % և պետական բյուջեից 30 % համամասնությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Էջմիածնի համայնքապետարանի
«Բարեկարգում» տնօրինություն
Վաղարշապատի ՏԳԲ
Ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0
Հ/Հ՝ 900322001018
ՀՎՀՀ՝ 04711468

Տնօրեն՝ _____ Մ. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Երևանյան բազալտ» ՍՊԸ
ք. Երևան, Հաղթանակ թաղ., Սպանդարյանի
արդյունաբերական հանգույց
«Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 22041012407 1000
ՀՎՀՀ՝ 01202433

Տնօրեն՝ _____ Խ. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ